ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

25 նոյեմբերի 2016թ.
թիվ

ՀՀ Արագածոտնի մարզպետ`
պարոն Գ.Գյոզալյանին

Ձեզ ենք ուղարկում Արագածոտնի մարզի Արագածոտն գյուղական համայնքի 2016 թվականի նոյեմբերի 18-ի ավագանու թիվ 22, 23 , 24, 25, 26 որոշումները:

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Արագածոտն համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

18-ը նոյեմբերի 2016թ. N 22

## ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ,10-րդ և 11-րդ հոդվածների պահանջով Արագածոտն համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել համայնքի տարածքում 2017թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ - 0

Լ. Ավետիքյան

Գ.Զարոյան

Լ.Կիրակոսյան

Զ.Մելիքյան

Ա.Մկրտչյան

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտն
գյուղական համայնքի ավագանու
2016թ. նոյեմբերի 18-ի N 22 որոշման

# ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

**հիմնական օբյեկտների համար՝**

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բ) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 30000 դրամ

**ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝**

ա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 3000 դրամ,

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 5000 դրամ:

**3. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝**

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 դրամ:

**4. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ** տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 դրամ:

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ. Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Արագածոտն համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

18-ը նոյեմբերի 2016թ. N 23

## ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով Արագածոտն համայնքի ավագանին՝

ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել համայնքի 2017-2021թթ. զարգացման հնգամյա ծրագիրը համաձայն հավելվածի:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ - 0

Լ. Ավետիքյան

Գ.Զարոյան

Լ.Կիրակոսյան

Զ.Մելիքյան

Ա.Մկրտչյան

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան

հավելված

2017 թվականի հնգամյա ծրագրով 1800000 ( մեկ միլիոն ութ հարյուր հազար ) ՀՀ դրամ նախատեսվում է կատարել Արագածոտն համայնքի ճանապարհների վերանորոգման համար:

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Արագածոտն համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

18-ը նոյեմբերի 2016թ. N 24

## ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԱՄՍԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետով Արագածոտն գյուղական համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Արագածոտն գյուղական համայնքի ղեկավարի 2017 թվականի ամսական դրույքաչափը սահմանել 240270 ( երկու հարյուր քառասուն հազար երկու հարյուր յոթանասուն ) ՀՀ դրամ:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ - 0

Լ. Ավետիքյան

Գ.Զարոյան

Լ.Կիրակոսյան

Զ.Մելիքյան

Ա.Մկրտչյան

Արագածոտն համայնքի ղեկավար Մ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Արագածոտն համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

18-ը նոյեմբերի 2016թ. N 25

## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետով Արագածոտն համայնքի ավագանին`

ՈՐՈՇՈՒՄ Է`

1. Հաստատել Արագածոտնի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն կից հավելվածի:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ - 0

Լ. Ավետիքյան

Գ.Զարոյան

Լ.Կիրակոսյան

Զ.Մելիքյան

Ա.Մկրտչյան

Արագածոտն համայնքի ղեկավար` Մ.Ղազարյան

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտն
գյուղական համայնքի ավագանու
2016 թ. նոյեմբերի 18-ի N 25 որոշման

# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 13
Աշխատակազմի կառուցվածքը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ 9

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ | |
|---|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 240270 | 240270 |
| Տեղակալ | 1 | 121680 | 121680 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | | |
| Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 133228 | 133228 |
| Առաջատար մասնագետ 3.1-1 | 1 | 121680 | 121680 |
| Առաջատար մասնագետ 3.1-2 | 1 | 121680 | 121680 |
| Առաջատար մասնագետ 3.1-3 | 1 | 121680 | 121680 |
| Սպասարկող անձնակազմ | | | |
| Կոմունալ ծառ. սպասարկող | 0.75 | 112600 | 84524 |
| Օպերատոր | 1 | 102680 | 102680 |
| Մշակույթի տան պահակ | 0.25 | 176000 | 44000 |
| Մանկապարտեզի պահակ | 0.25 | 176000 | 44000 |
| Հավաքարար | 0.25 | 176000 | 44000 |
| Գեղմասվար | 0.25 | 176000 | 44000 |
| Գրադարանավար | 0.25 | 176000 | 44000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 9 | | 1.267.422 |

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Արագածոտն համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

18-ը նոյեմբերի 2016թ. N 26

## ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017թ. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով համայնքի զարգացման քառամյա ծրագիրը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով ու «Բյուջետային համակարգի մասին»ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով Արագածոտն համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Արագածոտն համայնքի 2017թ. բյուջեն ՝ համաձայն կից հավելված 1-ով:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ - 0

Լ. Ավետիքյան

Գ.Զարոյան

Լ.Կիրակոսյան

Զ.Մելիքյան

Ա.Մկրտչյան

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան